*Մինասեան զի ինքն եւս ունելով ընդ իւր ըզ-Գաբրիէլ Աւագ քահանայն եւ զպատուարժան երեցփոխանն եղիցի նոցա աշխատակից վասն պարզաբանելոյ զխնդութիւնն գրաւոր կամ բանաւոր հաշուկաց հոգեւորականաց եւ ժո-ղովրդականաց եւ ըստ այնմ տնօրինել զար-ժանն ըստ իրաւանց եւ արդարութեանց։*

*Ժամանեալ են առ մեզ ի 4 Մարտի հա-մարաւ 40. յաղագս խնդրագործութեանցն ի ձէնջ մահտեսի Առաքելի Յովհաննիսեան եւ եղբօր որդւոց նորա Սահակայ եւ Մխիթա-րայ մահդէսի Թորոսեան բնակչաց ի քաղա-քագեօղն Սալմաստայ նահանգի որոց խնդ-րանացն համաձայն ոչ զանց արասցուք առ-նել զհոգունակութիւն ի ժամանելն մեր ի Թիֆլիզ ուր ճանապարհորդեսցուք հանդերձ Աստուծով յառաջիկայս եօթնեկի։ Նաեւ զգրութիւն ձեր ի 10 Մարտի համարաւ 43 ընկալեալ եմք զորմէ տնօրէնութիւն կախի ի բարձրագոյն իշխանութենէ Տէրութեան. ընկալեալ եմք եւ զգրութիւն ձեր ի 10 Ապ-րիլի ի պատասխանի գրութեանցն մերոց համարաւ 85. յաղագս անցիցն ընդ Յովսէփ խանին Մովսէսեան նաեւ զգրութիւն ձեր ի 20 Օգոստոսի համարաւ 92, վասն առաքե-լոյն առ մեզ զթեթեւամիտ տղայն Թաւրի-զեցի զոր ունիմք առ մեզ։ Ընկալաք եւ զգրութիւն ստորագրութեամբ Տ. Գաբրիէլ աւագ քահանայի եւ Տ. Յովսէփ քահանայի Տ. Յովսէփեան Առաքել աղայի մելիք Մի-նասեան երեսփոխ աւագի Մելիք Աբրահամ-եան գանձապետ Մատթէոսի Մովսէսեան։ Ծերունի Գրիգորեան եւ Գրիգորի Մալեանց առ որ գրեմք ձեզ զի նորոգ կարգադրու-թիւն Տէրութեան որ գրեալ գտանի վասն հանգուցեալ հոգեւորականաց առանց կտա-կի թողեալ ստացուածոցն լինելոյ պատկան-եալ ժառանգաւորաց հանգուցելոյն եւ ոչ վանօրէիցն որոց գտանին նոքա որդեգիր-եալք։ Ամենայն կանոնք յայնմ նորոգ կարգադրութեան ունին նախագրութիւն ի գլուխս այնոցիկ կարգադրութեանց այսպէս Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կա-ռավարութեան գործոց Լուսաւորչական Ե-կեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան։ Ըստ որոյ այն կանոնք արտաքոյ Ռուսաստանի միայն առանց գործադրութեանց ի ներքոյ համազ-գական նախնական օրինագրութեանց Հայ-կազանց առ որ գրեմ ձեզ ոչ բնաւ ունել զգայթակղութիւն այլ կալ հաւատի թէ ա-մենայն միացեալքն յետ վախճանի Նիկո-ղայոս եպիսկոպոսին պատկանեալքն Էջ-միածնի ունին միայ Էջմիածնի եւ պատկան-եալքն վանից Ս. Թադդէոս Առաքելոյն ու-նին միայ այնմ վիճակային վանից։ Եւ ոչ անագան այնոցիկ կանոնաց փոփոխութիւնք գոլով յանձնեցեալ մեզ բարձրագոյն կա-մօք մերով անձեռնհասութեամբ թէպէտեւ գտանի անկատար մինչեւ ցայժմ այլ ի գնալն իմ ի Թիֆլիզ յայս նուազ փոխադրեցից զա-մենայն զմատակարան մերում եկեղեցա-կան կառավարութեանց կարգաւորեսցուք կայսերական բարեհաճութեամբ զնորոգ կա-նոնս. ըստ պարգեւելոյ շնորհաց Աստուծոյ առաւել զգուշութեամբ վասն օգտակարացն ազգի եւ եկեղեցւոյ եւ Աթոռոյ Էջմիածնի եւ ամենայն վանօրէից։ Ընկալաք եւ զգրու-թիւն ձեր ի 15 հոկտեմբերի համարաւ 115, յաղագս հարուածոց խօլերայի որ աղագաւ ամենեքին միաբան պարտաւորեմք աղաչել զօժանդակութիւն Աստուածային ողորմու-թեանց։*

*Ցամի ազգական 1301, եւ փրկչական 1852*
*Համր. 382. Նոյեմբեր 29 ի Ս. Էջմիածին*
*ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*
*ՆԵՐՍԷՍ*

(9) Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

## «ԺՈՂՈՎԵՑԷՔ ԶՆՇԽԱՐԵԱԼ ԲԵԿՈՐՄՆ ԶԻ ՄԻ՛ ԻՆՉ ԿՈՐԻՑԷ»

### ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔ

Տ. Առողիկ Վրդ. այս տարի, Զատկական տօներու առթիւ գացած է մինչեւ Ռուսական սահմանագլուխը, Մանչուրի եւ Հայլար քաղաքները, ուր ցարդ չէր կրցած երթալ, քաղաքական վիճակին պատճառաւ: Առաջին քաղաքին մէջ Ռուսերը ունին երեք եկեղեցիներ. հոն կան 57 Հայեր, մեծ ու փոքր, տնտեսապէս աննախանձե-լի, բայց սրտի տէր մարդիկ. երբ կառաւորէն վար կ'իջնէ, ամբողջ Հայ գաղութը իրենց ի գլուխ ունենա-լով տեղւոյն Ռուս քահանաներէն մին, զինքը կ'առաջ-նորդեն դէպի Ռուսաց Մայր եկեղեցին. ուր առաջին անգամ ըլլալով կը հաղորդէ Ազգին եւ Եկեղեցւոյ ող-ջոյնն ու օրհնութիւնները եւ պահպանիչով կ'արձակէ ժողովուրդը:

Այդ տեղ կը կատարէ պատարագ եւ մկրտութիւն սոյն եկեղեցիի մէջ, տնօրհնէք, գերեզմանօրհնէք եւ հինգ ե-րախայ կը մկրտէ, որոնց ամենէն մեծը 16 տարեկան տղեկ մը: Այդ տեղ հիւրասիրուած է Մկրտիչ Սուրէնեան անուն Ախալցխացի ազգայինի մը տունը:

Երկրորդ քաղաքը եկեղեցի չլինելուն, տան մը մէջ կը կատարէ պատարագ. այդ տեղ եւս կան եղեր 35 Հայեր. կը կատարէ մէկ մկրտութիւն, տնօրհնէք եւ գերեզմանօրհնէք ըստ կարգին. տեղւոյն Հայութիւնը բաղդատմամբ առաջնոյն աւելի բարեկեցիկ են: Մօտ տասն օր անցնելէ ետք այս երկու քաղաքներէ, որոնք Խարբինէն 24 ժամ հեռու են երկաթուղիով, կը դառնայ Խարբին. կրկին կ'երթայ Զանչուն եւ Տայրէն քաղաքները, շուրջ 20 օրեր. այս անգամ Թէնչին ու Շանկհայ չէ գացած: Ի մօտոյ մտադիր է երթալ դարձեալ Տայրէն, պսակադրութիւն մը կատարելու, անկէ ալ, աւելի, Ճափոն անցնիլ ողորմութեամբն Աստուծոյ. վերադարձին Շանկհայ եւս պիտի հանդիպի:

Շանկհայի Հայութիւնը Յունիս 10ին դիմած է Ռուսաց եպիսկոպոսին, եւ խնդրած որ հոգեհանգստեան պաշտօն կատարէ Վեհափառ Հայրապետի մահուան քառասունքին առթիւ. տեղւոյն եպիսկոպոսը սիրով ընդառաջ գացած է անոնց խնդրանքին ու տրամադրած չորս քահանաներ, եւ իրենց Մայր եկեղեցին՝ այդ նպատակին համար. այդ առթիւ քահանաներէն մին բացատրած է դամբանականով մը կաթողիկոսին դիրքն ու դերը մեր Ազգային ու Եկեղեցական կեանքին մէջ: Տեղւոյն բոլոր Հայ գաղութը, ինչպէս նաեւ շատ մը օտարներ ներկայ եղած են սոյն արարողութեան:

Շանկհայի Հայ գաղութը այժմ ունեցած է 7 հոգիէ բաղկացած Վարչական մարմին մը, որուն արժանաւոր Նախագահը եղած է Եգիպտահայ Տիար Հայկ Աստուրեան, որ շատ սիրուած ու յարգուած, երիտասարդ ու կորովի մէկ անդամն է տեղւոյն Հայ գաղութին. նիւթապէս ալ առաջին կարգի վրայ կը գտնուի ի շարս հայոց: Այժմ լծուած են Շանկհայի մէջ աղօթատուն մը ունենալու գործին, այդ նպատակաւ ալ ընտրութենէն անմիջապէս վերջ հանգանակութիւն բացած են, ներկայ եղող 12 կարեւոր անդամներուն միջեւ, գոյացած է 1500 չինական տոլար, որուն 500ը Պրն. Հայկ ինքը նուիրած է առաջին առթիւ, ու խոստացած է նաեւ այդ նպատակին ամիսը 100 տոլար չինական իբր անդամավճար:

Արտառոց է եղած Ասողիկ Վրդ.ի առաջին հանդիպումը Պրն. Հայկ Աստուրեանին: Երուսաղէմէն Շանկհայ հասնելուն, երբ վերելակով կը բարձրանայ իր յարկաբաժինը, երբ վարդապետը կը տեսնէ վեղարով, կը շփոթի, ինչ ընելը չգիտնալով, ու երբ դեռ չնստած կը սկսի իր տունը օրհնել՝ չի կրնար արցունքները զսպել, ու անյագ կարօտով կը փարի ձեռքի խաչին, զինքն ալ յուզելով իրեն հետ. հրաժեշտի պահուն կը հարցնէ. «Հայր սուրբ բանի մը պէտք ունի՞ս». Հայր Ասողիկ կը պատասխանէ. «Ոչ մի բանի, եկեղեցիի մը պէտք ունիմ այստեղ». ու ան կը խոստանայ այդ մասին իր կարելին ընել: Ահա այժմ գլուխ անցած արժանաւորապէս հայ գաղութին, կ'ուզէ գոհացնել իր հոգեկան փափաքը եւ վարդապետին խնդրանքը: Նպատակադրուած տունը արդէն իսկ գնուած է, 18,000 եէնի, որուն գրեթէ կէսը վճարուած, իսկ մնացեալը քանի մը ամիսէն վճարելի: Տունը կը գտնուի քաղաքին ամենէն բանուկ թաղին, Բրեսդըն կոչուած մասին մէջ՝ որ առեւտրական կեդրոնն է:

Ասողիկ Վրդ. Խարբին գտնուած միջոցներուն, անխափան կը շարունակէ հայերէնի գիշերային դասընթացքը, եւ այժմ կազմած է նաեւ երկրորդ դասարան մը ութ երկսեռ աշակերտներէ բաղկացած: Առաջինները արդէն բաւական վարժուած են գրել, կարդալ եւ խօսիլ:

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✱ *Օգոստ. 7 Կիր. — Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Մեսրոպ Արքեպս. Նշանեան Լիբանան մեկնեցաւ օդափոխութեան համար։*

*— Ս. Պատարագ մատուցանեցաւ թէ՛ ի Ս. Յարութիւն և թէ՛ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին։ Ս. Յարութեան տաճարի բակին մէջ արդէն իսկ կառուցուած է տաճարի նորոգութեան համար տրամադրելի աշխատանոց մը և սկսուած՝ նորոգութեան նախնական աշխատանքներուն։ Տաճարէն ներս իրաւական սովորութիւններ և եկեղեցական պաշտամունքներ կը շարունակուին անխափան ըստ նախընթացի։*

*Ի Ս. Հրեշտակապետս քարոզեց Տ. Վահան Վրդ. «Ես ունիմ կերակուր ուտել, զոր դուքն ոչ գիտէք» բնաբանով. ներկայացնելէ ետք համառօտիւ Յիսուսի խօսակցութիւնը Սամարացի կնոջ հետ, պարզեց այն ատենուան Պաղեստինի քաղաքական կացութիւնը, Սամարիոյ բնակիչներուն յաչս Հրէից հեթանոս նկատուիլը, Յիսուսի զանոնք եւս իր քարոզած վարդապետութեան մասնակից ընելու փափաքը, զոր իրեն պարտականութիւն կը սեպէր, և այդ պարտականութիւնը կատարելու համար հաց ուտելը զանց կ'ընէր։ Յորդորեց ամէնքը որ իրե՛նք եւս ունենան իրենց պարտականութեանց գիտակցութիւնը և չթերանան անոնց մէջ։*

*— Յետ միջօրէի ժամը 3ին տեղի ունեցաւ քաղաքիս Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ամավերջի հանդէսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Ժառ. Վարժարանի բակին մէջ։ Ներկայ էր ժողովուրդի հոծ բազմութիւն մը։ Վարժարանի սաներ ամբողջ երեք ժամեր իրենց գրաւեալ պահեցին Երուսաղէմի հայ հասարակութիւնը, իրենց մանկական և հայրենաշունչ արտասանութիւններով, երգերով, պարերով, մարզանքներով, տրամախօսութիւններով եւ այլն. վարժարանի շրջանաւարտ սաներ շատ յաջող կերպով ներկայացուցին «Յուլիոս Կեսար»էն պատկերներ, անգլիերէն լեզուով։ Հանդէսի կէսին կատարուեցաւ մրցանակաբաշխութիւնը։ Նախ վարժարանի Տեսուչ Տ. Կիւրեղ Վրդ. Իսրայէլեան կարդաց ամփոփ տեղեկագիր մը վարժարանի ներքին կեանքի վերաբերեալ։ Ըստ այդ տեղեկագրի այս տարի Թարգմանչաց վարժարանի երկսեռ աշակերտներուն թիւը եղած է 580, յառաջիկայ տարուան համար կը նախատեսուի աւելի քան 600 աշակերտ. թիւ մը՝ որ անհրաժեշտ կը դարձնէ վարժարանի շէնքին վրայ նոր դասարաններու կառուցման պէտքը։ Այս կենսական խնդիրը հանրութեան լուրջ ուշադրութեան յանձնեց Տեսուչ Հայր Սուրբը։*

*Ապա Ամեն. Ս. Պատրիարք հայրը բեմ բարձրանալով խօսեցաւ հայրաբար։ Շեշտեց կարեւ-*